

ՄԱՀ ԵՐՎԱՆԴ ՀՅՈՒՍԻՍՅԱՆԻ
(1888—1979)

Տարվույս փետրվարի 20-ին Իտալիայի Միլանո քաղաքում, իր բնակարանի մեջ, 91 տարեկան հասակում, իր մահկանացուն կնքեց Մայր Աթոռ ս. Էջմիածնի հարազատ զավակ և ս. Հռիփսիմե տաճարի վերանորոգության բարերար տիար Երվանդ Հյուսիսյանը:

Հակառակ նրա առաջացած տարիքին, նրա մահը մեծ կորուստ և մեծ վիշտ էր բոլոր նրանց համար, ովքեր ճանաչում էին նրան:

Հանգուցյալը ծնվել է 1888 թվականին Թոքատում: Նա իր աշխատունակ կյանքի ընթացքում հիմնականում զբաղվել է առևտրով և այդ ասպարեզում հասել փայլուն հաջողությունների:

Լինելով, սակայն, գիտակից, ազգասեր մի հայ, նա չի սահմանափակվել միայն իր անձնական կյանքով, այլ ծավալել է ազգային-հասարակական, եկեղեցանվեր, մշակութային օգտակար գործունեություն բոլոր այն երկրների հայ համայնքների մեջ, ուր նա ապրել է՝ Եթովպիա (1912—1941 թթ.), Եգիպտոս (1941—1945 թթ.) և ապա Իտալիա:

Նրա հասարակական գործունեությունը հիմնականում կայացել է հայ մշակույթի զարգացմանը և տարածմանը նրա սատար հանդիսանալու մեջ՝ սփյուռքյան պայմաններում: Այդ նպատակով իր հնարավորությունների սահմաններում նա իր լայն նյութական օժանդակությունն է բերել ամեն անգամ, երբ առիթը ներկայացել է: Անգամ չլինեին նրա կատարած բազմաթիվ բարեգործությունները, բավական կլիներ հիշատակել միայն Բեյրութում նրա ստեղծած Հայագիտական Հիմնարկը, որպեսզի նրա մասին կազմված դրական կարծիքը լիներ արդար:

Երախտաշատ հանգուցյալը միևնույն ժամանակ հավատավոր էջմիածնասեր էր: Նա այդ ապացուցել է բազմաթիվ անգամներ թե՛ բարոյական և թե՛ նյութական իր աջակցությամբ, որպես Ամենայն Հայոց Հայրապետի մտերիմ բարեկամ: Ամենայն Հայոց Հայրապետը, գնահատելով տիար Երվանդ Հյուսիսյանի կատարած ազգանվեր, եկեղեցաշեն և բարեսիրական վաստակը, նրան պարգևատրել է «ս. Գրիգոր Լուսավորիչ» ականակուռ Ա կարգի շքանշանով:

Հանգուցյալը երկար տարիներ եղել է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության անդամ և 1960-ական թվականներին եղել է այդ Միության կորովի փոխնախագահը և իր այդ պատասխանատու հանգամանքով այցելել է սփյուռքի զանազան հայ կենտրոններ:

Հանգուցյալի նյութական օժանդակությամբ Բեյրութի մեջ հաստատվել է Հ. Բ. Ը. Միության անունով մի հիմնադրամ՝ ապահովելու համար արդարորեն իր անունը կրող Հայագիտական Հիմնարկի գործունեությունը:

Ստանալով տիար Երվանդ Հյուսիսյանի

ԵՐՎԱՆԴ ՀՅՈՒՍԻՍՅԱՆ
(Քանդակագործ՝ Նիկողոս Նիկողոսյան)

մահվան տխուր լուրը, Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռից նրա դստեր և փեսայի՝ Մարի և Զավեն Մնտիկյանների անունով հղեց հետևյալ ցավակցական հեռագիրը՝ սփոփելու համար նրանց կրած ծանր կորստի դառնությունը.

«Խոր վշտով կմասնակցինք Ձեր և ամբողջ համայնքի սուգին: Սուրբ Էջմիածնի խորանին առջև կաղոթենք Ձեր աննման հայրիկի՝ Երվանդ Հյուսիսյանի արդար հոգվույն համար: Հանգուցյալի բարի հիշատակը անմոռաց պիտի մնա իբրև հասարակական ազնիվ, իմաստուն գործիչ, իբրև իրավ հայրենասեր, իբրև ազգային բարերար, իբրև հոգատար հարազատ զավակ Մայր Աթոռիս:

Օրհնությո՜ւն և լո՜ւյս հանգուցյալի պայծառ հիշատակին: Թող սուրբ Հոգին մխիթարե Ձեր վշտահար սրտերը և Ձեզի բոլորիդ պարգևե արևշատ օրեր:

Կիրակի հանդիսավոր պատարագ և հոգեհանգիստ Մայր տաճարի մեջ:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

Հանգուցյալի հուղարկավորության արարողությունը, ի ներկայության բազմահարյուր բարեկամների, տեղի ունեցավ փետրվարի 22-ին Միլանոյի հայոց ս. Քառասուն Մանկանց եկեղեցում՝ նախագահությամբ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի և մասնակցությամբ տեղի հայոց հոգևոր հովիվ տ. Սարգիս քհն. Սարգսյանի:

Տ. Սերովբե արքեպիսկոպոսը, հանուն Վեհափառ Հայրապետի, անձամբ ցավակցություն հայտնեց հանգուցյալի հարազատներին և հուզիչ ու բովանդակալից մի դամբանականով վեր հանեց տիար Երվանդ Հյուսիսյանի եկեղեցանվեր, մշակութային, բարեսիրական և հասարակական գործունեությունը:

Փետրվարի 25-ին, Բուն Բարեկենդանի կիրակին, Մայր տաճարում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն հանգուցյալի հոգու խաղաղության համար:

Հարգա՜նք և երախտագիտությո՜ւն եկեղեցասեր հանգուցյալի բարի հիշատակին: